

ԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie معجم علوم

ԽՐԱԳՐԱԳԵՏ-ՏԵՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

Թի 17

1898 ՅՈՒՆԻՍ 27

Ամեն տարի համար Տարեկան կանխիկ 50 դրանեկան Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ 13 դրանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Ժրանգ: Թղթասարի ծախսը կոմպոզիցիան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՄԵՐ. — Գիտական աշխարհէն. — Ախտաբուժութիւնը մարմնային հիւթերով:
Ն. ԹՈԳԱԹԼԵԱՆ. — Ժողովրդական իրաւաբանութիւն:

ԱՐԱՔՍ. — Մանկավարժական հարցեր:

Մ. Կ. ՄԱԼԱԹԵԱՆ. — Օգը եւ միւրոպները: — Միջբրայները:

Ղ. ԲՈՒԱՏ. — Պարսիկականակնա. — Պանաններ: — Հաղարջների եւ իւր մշակութիւնը:

ՆԵՐՍԷՍ Գ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ. — Նամակ նկարապէս:

ՏԻԳՐԱՆ ԱՃՅԱՆ. — Գ. Խնդիր:

ԱՐԱՔՍ. Առաջին սնտակաւնգ: — Անիպէ:

ՅԱՆՏԻԿԻՆԸ. — Խոհանոցի բաժինը. — Տիւնի համեմատաց:

Թղթակցութիւն. — Հարցում:

Զբօսանք. Հանելուկ թիւ 8:

Հատը 40 փարայ

Կ. ԳՈՒԻՍ

ՏՊԱԳՐԱԳԵՏԻՆ Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Մանմուտ-իւսա, Բիրքնի խան թիւ 26

ՁԲՕՍԱՆՔ

ՀԱՆՆԵԼՈՒՆ ԹԻՒ Ց

Ես դեռ չեմ ծներ,
Բայց ո՛վ եմ գիտե՞ս.
Քեզմէ վար ու վեր
Սմէն տեղ կա՛մ ես.
Գրպանդ որ մտնեմ
Դուն խեղճին խեղճն ես.
Երբ քեզ տեսնուիմ
Իսկոյն կը մեռնիմ:
Աշխարհիս ամբար
Ես եմ ահագին,
Աստեղք անհամար
Ինձմէ՛ դուրս եկին.
Ես չեղայ կարօտ
Նոյեան տապանի.
Զի՛ս կա՛նչէ եր՛շտ
Գողն ի յատենի:
Երբ մէկը բընաւ
Բանի մը հետ չէ,
Գիտցիր որ ըսաւ
Թէ անունս ի՞նչ է:

Ա Ձ Դ

Գաղատիոյ Որբավանդին համար օրի-
նակ մը Հանրագիտակ կը խնդրուի, զոր
բարեսէր ազգայնոց ու շաղկութեան կը
յանձնենք:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՊԱՐԵԼ

Բոլա, Բոլա-Մագուրա, Վալս, Զօրի,
Բա-սը-Քաթոբ, Բոլա-Քուուգէ,
Բա-սե-Բաթինեոն, Բասիլ, Լանսիե

Ոսֆի ձեռքը 34 պատկերներով քացասուած է

Իր տեսակին մէջ այս առաջին գիրքը
կը ծախուի Մէրճան փողոց, Մարգար-
եան Գրատունը և Պալի-Բաշա Պարոնեան
դեղարանը Հեղինակին քով:

Գին 5 զրուշ

ԿԱՐԵԻՈՐԱԳՈՅՆ ԾԱՆՈՅՑՆԵՐԸ

Ով որ կուզէ ընտիր ու փափուկ ճա-
շակով, պարզ թէ փառակազմ կամ իւր
ախորժած ձեւով և ժամանակիս համա-
ձայն՝ շատ աւելի դիւրամատչելի գնով
տպել տալ լրագիր, հանգէս, նա առա-
ւել գիրք, ազդ, ծանուցում, մահագոյթ,
այլաբարտ (ոեւէ լեղում) և կամ ուրիշ
տպագրերի բան, գիմելու է ուղղակի
Պօլիս, Մահմուտ փաշա, Բիւրքէ խան,
ն.ձ. Արամեանի ի վաղուց անտի Հայոց
ժանօթ Տպարանը թիւ 26. կամ Մար-
գարեան ժանօթ Գրատունը ի Մէրճան
շարք, թիւ 57:

Անսխալ ուղղագրութիւն. պայմա-
նաժառնի ճշտութիւն. վճարմունք՝ կան-
խիկ և յանձնառութիւնք երաշխաւոր-
եալ:

Նոյնպէս ով որ կուզէ կազմել տալ
գիրք կամ տետրակ, թէ ընտիր ճաշա-
կով և թէ աժան գնով. և կամ ով որ
կուզէ մայրաքաղաքէն թէ գաւառներէն
գնել ոեւէ գիրք, ըլլայ գայրոյական
թէ եկեղեցական կամ պարզ ընթերցա-
նութեան կամ մասնագիտական կամ
լոկ հմտական (ամեն լեզուէ). կամ ոեւէ
դեղարուեստական գործիք ու պիտոյք.
Թող դիմէ Կ. Պօլիս, Մէրճան շարք. -
Մարգարեան Գրատուն թիւ 57:

Գին՝ անկէնէն աւելի դիւրամատչելի.
Յանձնառութիւնք և վճարմունք ան-
միջական:

Մայրաքաղաքէն թէ գաւառներէն ով
որ կուզէ հմուտ և կարող ուսուցիչ կամ
ուսուցչուհի, մասնաւոր տանց կամ Ազ-
գային վարժարանաց համար, գիմելու է
խմբագրութեանս որ մասնաւոր յայտա-
րարութեամբ կը գտնէ:

ՎԵՐՋԻՆ ԿԱՐԵԻՈՐԱԳՈՅՆ ԶԵԿՈՅՑ ՄԱ


Ով որ կուզէ վեց տարուան մէջ ուսա-
նելիք Հայ. և Թրանս. գրական բարձ-
րագոյն լեզուն, սորվիլ մէկ տարուան
մէջ, գիմել առ Վարչութիւն Հանրագի-
տակի, Արամեան տպարան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական և Գիտական

Encyclopaedia



Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 17

1898 ՅՈՒՆԻՍ 27

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԱՆՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄՆԱՅԻՆ ՀԻԹԵՐՈՎ

Ինչ տարի եղաւ այն օրէն ի վեր, երբ առաջին անգամ, 1889 յունիս 1ին ՊառուՆ-Սեդաւ հռչակաւոր ընտրուող, Բարիգի Կենսաբանական Ընկերութեան կը հաղորդէր իր մէկ նշանաւոր գիւտն, որ բժշկութեան արհեստին մէջ, նոր ճամբայ մը կը բանար, հին դրութիւնները տակնուվրայ ընելու յաւակնութեամբ:

Ծերերը երիտասարդացնելու միջոցը գտած էր:

Անհաւատալի պիտի թուի ասիկա ընթերցողներուն անշուշտ. բայց այդ գիտնականին խօսքին նայելով, պէտք է հաւատ ընծայել. որովհետեւ՝ փորձը իր վրայ կատարած է եղեր: Եթեանասուն երկու տարեկան ծերուկ մ'էր, շնորհիւ իր նորագիւտ դեղին, արհամարհելով ժամանակին սրընթաց յառաջ խաղացումը, տարիքի ծանր բեռ մը կը զրդէ կը նետէ իր վրայէն, եւ ահա ՊառուՆ-Սեդաւ բոլորովին բարեխոսուած, իր Եռանդուն երիտասարդ մը կը ներկայանայ հանրութեան. իւր ամբողջ զօրութիւնները վերագտած, մկանային զրութիւնը վերահաղմուած, եւ ջղային դրութիւնը նոր ուժ

առած էր: Եւ մինչեւ իսկ առնական կարգը զուլիւնը, որ երկար տարիներէ ի վեր ընդարձացած էր, նոր ոգեւորում մը կ'ստանար: Այսպէս տարածուեցաւ այն առնի, իրողրէ լրագիր, բերնէ բերան, որ սակայն ՊառուՆ-Սեդաւ իւր նորագիւտ փանասէին այդչափ աւառպելակերպ յատկութիւններ վերագրած չէր. այլ աւելի կը վստահացնէր թէ, մասնաւոր ներարկումներով մտրակի հարուած մը տուած պիտի ըլլայ միայն ու ժաթափ գործարանակազմութեանց, ինչ որ ալ ըլլայ սակայն հիւանդութեան պատճառը: Ահաւասիկ դարման մը, որ ամեն տեսակ հիւանդութեան կը յարմարի, կրճախտի ինչպէս չաքարախտի, թոքախտի ինչպէս յոգացաւի, անկարողութեան ինչպէս ջղադարուութեան, եւայլն, եւայլն. շիտակը ըսելու համար, տիեզերական փանասէ մը կոչուելու չափ կ'արժէ: Բայց ի՞նչ օգուտ որ, գործադրութեան եղանակը բազմակնճիւ, յաճախ վտանգաւոր եւ ցաւալի, եւ հետեւանքը կասկածելի ըլլալով, պահ մը Սեզաւոսեան այս նոր դարմանումը երեսէ ձգուեցաւ:

Ի՞նչ էր սակայն այս հրաշագործ դեղը, որ ամբողջ աշխարհի ուշքը գրաւեց, որու մասին որչափ երկրայական, նոյնչափ ալ վստահօրէն խօսողներ կային:

Հիւթ մը, զոր կ'արտադէր ՊառուՆ-Սեդաւ, շուներու եւ գօպէյներու (հնդկախող) ամորձիքները տրորելով: Նոյն իսկ Կենաց

աղբիւրներէն քաղել կը փորձէր իր Կենսա-
նորոգ եւ վերափոխիչ Փանասէն. որ մութի-
տակ ծածկուած լայնարձակ ասպարէզ մը
բանալ կը խոստանար ախտաբուժութեան
առջեւ: Ստկայն իր առասպելակերպ հռչակը
երկար ատեն չի կրցաւ սլահել, եւ երիտա-
ստրդանալու տենջանքով տոգորուող ծերուկ-
ներն ալ յուսախափ մնացին: Բայց կեցիք,
բոլորովին ջուրը չ'իսկաւ Սէգառտեան դար-
մանումը: Գիտութիւնն անոր միգամած հո-
րիվոնին վրայ պլլալացող աղօտ լյախ նշլլ մը
կը տեսնէր: Արդեօքներու երկբայական վա-
րանումէ մը ետքը, ՊառուՆ Սէգառ իր հե-
տեւորդները ունեցաւ. խնդիրը յուզեցին,
յեղյեղեցին, չըմհայեաց եւ լուրջ ուսում-
նասիրութիւններ կատարեցին, եւ այդ ան-
խնջ հետախոյզները, հորիվոնին վրայ տա-
րածուած մառախուղը ցրուելով, Սէգառ-
տեան ախտաբուժութեան ճամբուն վրայ լոյս
սփռեցին: Իրենց փքըր դարձուցին այն ա-
ռին, ուրիշ մարմնային յօրինուածներու վը-
րայ եւս. եւ անոնցմէ արտամղուած հիւթե-
րուն մէջ, կենսանորոգ յատկութիւններ փնտ-
ւեցին. եւ իւրաքանչիւր ախտաժգտ յօրին-
ումի դարմանումին համար, իրեն համա-
դատասխան յօրինուած է մը արտամղուած
իւթը փորձեցին. որով՝ ՊառուՆ-Սէգառի
սկզբնական Ամորճախիւքով ախտաբուժութիւնը
կոչուեցաւ ընդհանուր առմամբ Հիւթաբու-
ժութիւն (Opothérapie):

Եւ այս անգամ հաստատեցին թէ՛ կենդա-
նի յօրինուածակազմութեան մէջ գտնուած
դեղձերը, մասնները ոչ միայն այլ եւ այլ
հիւթեր արտասորելու կը ծառայեն, այլ եւ
կազմակերպելու այնպիսի գոյացութիւններ,
որոնք արենային յօրինուածին մէջ ներար-
կուելով, տարբեր ազդեցութիւններ յառաջ
գիտի բերեն կենսական դրութեան վրայ:

Տարի մը վերջը, 1890ին ջղային դրու-
թեան հիւթը փորձեցին. եւ 1891ին ալ հա-
գագի գեղցին (glande thyroïde), 1892ին ե-
րկամանց արտամուղը, եւ հետզհետէ պանգ-
րեաճնի, լեւոգի հիւթերու, ոսկրային ծուծի
արտամուղերը: Բայց այս ամենուն մէջէն,
ամենէն ազէկ արգասիքը տուողը հագագա-
յին գեղձի հիւթին արտամուղը եղած է:
Փորձարկուները տեսան որ այս հագագի
գեղձին արտամուղով դարմանուած անա-

սունները զգալապէս կը նիհարային: Դա-
ջալերուելով այս արդիւնքէն, գիրութեան
ախտէ վարակուած մարդոց վրայ կատարե-
ցին իրենց փորձերը, որ կատարելապէս յա-
ջողեցաւ:

Խծայունց (myxœdème) կոչուած հիւան-
դութիւնը, որ հագագային գեղձի մէկ ձե-
ւափոխութենէն յառաջ կուգայ, որու մէջ
հագագի կազմածը կը տկարանայ, կամ քիչ
չատ տկարանալով կ'անհերեւութանայ, մարմ-
նոյն բարեխառնութեան աստիճանը կ'իջնայ,
մանասի (նապգ = pouls) զարկերը կը յամ-
բանան, միգային արտասորումը կը դժուա-
րանայ. հագագային գեղձի արտամուղի նե-
րարկումով յաջող դարմանում մը ձեռք կը
բերեն: Ասկէ կը հետեւի որ, հագագային
գեղձի արտամուղը, սննդականութեան վրայ
իր իւթան կը ներգործէ, ներմուծուած նիւ-
թերու օքսիտացումը օժանելով: Բայց դժ-
բաղդարար, այս պարագային մէջ իր ազ-
դեցութիւնը երկարատեւ չէ:

Ջղային կազմածի հիւթին արտամուղը
բաւական յաջողութիւն գտած է խեղագա-
րութեան, ուղեղային այլեւայլ հիւանդու-
թեանց, ջղային դրութեան անկանոնու-
թեանց համար:

Երիկամանց արտամուղի ներարկումը փոր-
ձեց առաջին անգամ Տիէօլաֆուա բոֆէ-
սէօը, միգարիւնութեան (urémie) վարակ-
ուած հիւանդութեան մը դարմանումին հա-
մար, ուր մէզը արենային երակներէն վե-
րածծուելով, յօրինուածակազմութիւնը կը
թունաւորէ, եւ միգային արտասորումի դա-
դարումէն միգային տենդ յառաջ կուգայ,
դնդերային ցնցումներ, թմրութիւն, ապ-
շութիւն, մոյային տկարութիւն, պապան-
ձում, եւ այլն եւ այլն. եւ առ առաւելն 3-4
օրէն դժնդակ կացութեան մը մէջ մահով կը
վերջանայ, եթէ սկզբնաւորութեան ժամա-
նակ դարմանումի չի ձեռնարկուի, եւ այս
վերջի պարագային մէջ իսկ թէեւ մէկ քանի
օր վերջը, բայց ընդհանրապէս միշտ մահով
կը վերջանայ:

Տիէօլաֆուա այս դժնդակ կացութեան
մէջ, անվհատ կերպով կ'ուզէ մաքաւիլ այդ
անդիմադրելի հիւանդութեան հանդէպ, եւ
ամեն կարելի դարմանումներու անյաջող ըն-
թացքը տեսնելով, հաստատապէս կ'որոշէ

վերջին փորձ մ'ընել, երկամանց արտա-
մուզի ներարկումով կը յաջողի. անյուսուպի
եւ սքանչելի արդիւնք մը ձեռք կը բերէ:
Հիւանդին բնդհանուր վիճակը կը բարւոքի
զգալապէս, թմրութիւնը կը նուազի, միւս-
այն արտաստորումը կը վերսկսի, եւ ակտիւ-
կը բացուելով, կ'սկսի ուտել: Հիւանդը ա-
զատած էր:

Պանդրէսովին գեղձի արտամուզի ներար-
կումը, սովորական չափարախտաւորներու
արտասովոր չափարային արտադրումը կը նը-
ւազեցնէ. եւ այդ ակտիւ մէկ ուրիշ տեսա-
սին մէջ ալ, որ նիհարացուցիչ չափարախտ
կը կոչուի. զգալի պարարտացում մը յառաջ
կը բերէ:

Լեարդի հիւթն ալ, կարգ մը լեարդային
հիւանդութիւններու մէջ յաջողութեամբ պը-
սակուեցաւ: Ժիւլյէն եւ Քաւնո վարպետ-
ները կ'ըսեն թէ, լեարդի արտամուզի նե-
րարկումը, փորձաքար մ'է լեարդային այն
հիւանդութեանց մէջ, որոնց կ'ընկերանայ
նաեւ չափարախտը: Եթէ լեարդը արդէն չա-
փազանցօրէն վարակուած է չափարախտէ,
ներարկումը ամուլ կը մնայ, իսկ հակառակ
պարագային մէջ չափարի արտադրումը կը
չափաւորէ:

Լեարդային հիւանդութեանց ընթացքին
մէջ քթային արիւնհոսութիւնը հիւանդու-
թեան մէկ հետեւանքը ըլլալուն եւ յաճախ
պատահելուն համար, այնպէս կը կարծուի
որ լեարդը մասնաւոր ներգործութիւն մը
ունի արեան քաղաղրութեան վրայ. եւ այս
ներգործութիւնը կը նուազի երբ լեարդային
բճիճը ակտաւորի. որով եւ արիւնը իւր ե-
րակներուն մէջէն դուրս կը սլուծկոյ յար-
մարագոյն վայրերէ: Ասկէ հետեւցնելով, վե-
րոյնէն վարպետները լեարդային հիւթու-
թութեան զիմեցին, ամեն անգամ ոչ հի-
ւանդները իրենց լեարդային հիւանդութեանց
մէջ ընդային արիւնհոսութեանէ կը բռնու-
նին: Եւ արգասիքներն այն աստիճան քա-
ջալերիչ եղան որո՞ այս ակտաւորութեան
դրութիւնը ընդարձակելով, ուրիշ կարգ մը
զծուարարութիւն արիւնհոսութեանց հա-
մար եւս կիրարկեցին, եւ միշտ յաջողու-
թեամբ պսակուեցան:

Բայց հիւթաբուժութիւնը ասոնցմով չի
սահմանափակուիր, անվհատ խուզարկուները

կը Զանան փորձել մարմնային ուրիշ յօրին-
ուածներու հիւթերն ալ, որոց մէջէն յիշա-
տակելի են ոսկրային ծուծի արտամուզը, որ
յաջողութիւն գտաւ անարիւնցային սմոյնալսէ
վարակող կանանց դարմանումին մէջ. ինչ-
պէս եւ ձուարանի գեղձերէն առնուած ար-
տամուզն, կանացի գործարանակազմութեան
մէկ քանի հիւանդութեանց մէջ:

Ուլնեգեղձի (thymus) արտամուզը տղայոց
ընդերային ծիրախտի մէջ յաջողած է: Մա-
զաաբեր գեղձի, փայծաղի, թոքի, եւայլն,
եւայլն. արտամուզերու մասին տակաւին ու-
րաջ եզրակացութեան մը հասած չեն: Ինչ-
պէս եւ կարգ մը գեղձեր ալ ամենեւին չեն
փորձուած:

Մինչեւ ցարդ հիւթարուծութիւնը կը փո-
ձուէր մասնաւորապէս մարդոց վրայ. բայց
վերջերս նշանաւոր անասնաբույժեր սկսան
լրջութեամբ սրարալիլ կենդանեաց վրայ ալ
փորձելու, ի միջի այլոց, Մ. Լանկ, անաս-
նաբույժ ի Նումէա (Նոր Գալէտոնիոյ մէջ),
չահեկան տեղեկագիր մը կը ներկայացնէ Սե-
նասնաբուժութեան Կեդրոնական Ընկերու-
թեան «Պաուլ-Սեգաուի իրութիւն կոչուած
Ամորձահիւթով ախտաբուժութիւնը անասնոց
վրայ գործադրուած» խորագրով:

Այս զխոնական անասնաբույժին փորձերը
կը կայանան մասնաւորապէս ամորձէից հիւ-
թի արտամուզով ներարկման մէջ, որ սկսած
է 1894ին, եւ կատարած 10 ձիւ եւ 3 շու-
ներու վրայ:

Վեց տարեկան ձի մը մկանային ճգտումնե-
րէ վարակուած, նիհարութեան վերջին աս-
տիճանին հասած էր, եւ ամենափոքր աշխա-
տութիւն մ'իսկ ընելու անկարող ըլլալով,
երկար ատեններ դարմանատունը կը մնար:
Մ. Լանկ այդ ձիուն կը ներարկէ 24 ժամ-
ուան մէջ 2 անգամէն 20 հար. մեթր խո-
րանարդ, ամորձէից հիւթի արտամուզ. յե-
տոյ դայն կը զրկէ զինչորական մարդասիր-
ձերու, զոր կը լծեն հր' տանիի մը: Առաջին
օթեւանը, 40 քիլոմեթր տեղ առանց գայ-
թելու, եւ առանց ունէ միջադէպի կը կա-
տարէ: Հետեւեալ օրը կրկին 40 քիլոմեթր
ճամբայ մը կը կտրէ միեւնոյն յաջողութեամբ:
Եւ այնուհետեւ շարունակ գոհացուցիչ պոյ-
մաններով սկսաւ աշխատիլ: Մարգարիտները
չրանալուն պէս, դարմանումն ալ կը դադ-

րեցնեն. բայց իսկոյն նիհարութիւնը կը վերսկսի: Մ. Լանկ կրկին կը ձեռնարկէ ներարկման, որով ձիուն ակտիվացած կը բացուի, ոյժերը կը վերանորոգուին, եւ ինք քաջառողջ լինակ մ'ստանալով, կրկին կը զրկեն իր մարտկոցը. ուր կ'սկսի աշխատիլ սովորական կերպով իր ընկերներուն նման:

Միեւնոյն անյուսալի յաջողութիւնը գտած է նաեւ, տեղափոխական անկարգութենէ (ataxie locomotrice) բռնուած ձի մը եւ յօգացաւէ վարակուած զամբիկ մը (գրասաֆ) քարմանելով ամորձէից հիւթով. որոնք բժշկուած են 5 օրուան մէջ, մինչեւ այն ատեն ամեն կարելի միջոցներով ի զուր դարմանելէ վերջ:

Կ'երեւի թէ՛ ամորձէից հիւթի արտամուտը իր ընդհանուր ազդեցութիւններէն զատ, անդականութեան երեւոյթներու մէջ աւելի նպաստաւոր դեր մը կը կատարէ: Մ. Լանկ շատ մը դէպքեր կը յիշէ այս մասին, իր տեղեկագրոյն մէջ. եւ կ'ըսէ թէ՛ շնորհիւ այդ անբարկումներու, միշտ՝ պատահամբ կամ վիրաբուժական գործողութիւններու հետեւ ամօք յառաջ եկած վէրքեր, անյուսալի արագութեամբ սպիացած են:

Շուներու մասին ալ խիստ նշանակելի յաջողութիւն գտած է ամորձահիւթի արտամուտով դարմանումը. որ ի միջի այլոց, ամենէն աւելի յիշատակելին է վերնոտ (սառնալը) շան մը ապաքինումը:

Ներարկելի հեղուկին քանակութիւնը, օրական 10 հար. մեթր խորանարդ է ձիերու համար, իսկ շուներու համար 2—2 1/2 հար. մեթր խորանարդ:

Մ. Լանկ առաջինը եղած է կ'ըսէ Տր. Է. Ժօն, Ժուլիանալ տ'Ակուիզիլիւի մէջ. Ֆռանսական գաղթականութեան մէջ Պառու-Սէզաուի հեղուկը գործածող, անասնոց հիւանդութեանց համար. բայց նոյն թուականին, նոյն իսկ Ֆռանսայի մէջ ալ Մ. Մէնիէն այդ օրինակ փորձ մը կատարած էր:

Ենթական Լէօնպէրկի խոշոր շուն մ'էր, եւ կը պատկանէր Տն. Քօլբաքօֆ անուն Բարիգաքնակ Ռուս տիկնոջ մը: Այդ կենդանին քանի մը ամիսներէ ի վեր անդամալուծուած էր կէս մէջքէն վար. նիհար վերջին ծայր, այնպէս որ մորթը ոսկորներուն փակած եւ մեծ մասամբ հերթափախ եղած էր:

Բոլոր անասնաբուժական հանձարի կարելիութիւնները ի զուր փորձած էին այդ դժուարագէ կենդանիին վրայ. Տիկին Քօլբաքօֆ անձանձիր կը կարդար բժշկական թերթերը, եւ Պառու-Սէզաուի դրութիւնը ծանօթ էր արդէն իրեն: Մ. Մէնիէն կը ծանօթանայ այդ տիկնոջ հետ, իր բարեկամին Տր. Կամալայի միջոցաւ: Տիկինը՝ հետաքրքիր Պառու-Սէզաուի դրութեան մասին, Մ. Մէնիէնի կարծիքը կ'ուզէ հասկնալ, այդ դրութիւնով իր շունը դարմանելու համար, որ խորհուրդ կուտայ ձեռնարկելու: Այն ատեն Պառու-Սէզաուի աշխատանոցին պետը Մ. տ'Աստիվալ միմիայն ինք կը պատրաստէր ամորձական հեղուկը: Մ. Մէնիէն անոր կը դիմէ, որ այն ալ հետաքրքրուելով այս շահեկան փորձէն, Տիկին Քօլբաքօֆի կուտայ պէտք եղած քանակութեամբ այդ հեղուկէն: Տիկինը ինքն իր ձեռքով կ'ընէր ամեն օր իր շունը ներարկումները: Հետեւ օրերէն իր շունը գոհացուցիչ եւ նշանաւոր եղան: Շունը աստիճանաբար կ'ապաքինի, անդամալուծութիւնը անհետանալով, իր ոյժերը կը վերելին, առողջապահութիւնը կը յաջորդէ, մազերը կը բուսնին առատութեամբ ու փայլունութեամբ: Քանի մը ամիսներ շունը կատարեալ առողջութեան մէջ էր, երբ օր մը յանկարծ անմարտողութենէ կը մեռնի:

Կը պատմուի թէ՛ կ'ըսէ Տօթթէօն Ժօրժ՝ մեծանուն քիմիագէտ Պալաս, իւրաքանչիւր ճաշէ վերջ փոքրիկ գաւաթ մ'օղի կը խմէր: օր մը, նախաճաշը լրանալէն վերջ, Գլոս-Պէռնաուի այցելութիւնը կ'ընդունի. այս վերջինը առիթէն օգուտ քաղելով, ալքոլիկ ստամոքսի վրայ ըրած ցաւալի ազդեցութիւնը կ'ուզէր սպացուցանել, իրի փաստ ներկայացնելով շուներու վրայ կատարուած փորձերը, որ ալքոլի մատակարարութեամբ յօրինուած ահազմային անկարգութիւններու ենթակայ եղած են: Պալաս հանգարտութեամբ ունենդրեց իր բարեկամին ըսածներուն, եւ յետոյ իւր փոքրիկ գաւաթը խմելով, կը պատասխանէ.

— Այդ ձեր ըսածը կ'ապացուցանէ թէ, օղին շուներուն համար չինուած չէ:

Պիտի կրնա՞նք Պառու-Սէզաուի հեղուկին համար ալ նոյնն ըսել, որուն գլխաւոր

հայթայթիչները չունենոր ըլլալէ վերջ, ան-
չուշտ անոր արժանաւոր նպաստաւորեալնե-
րը պէտք է ըլլան: Բարիքը իւր աղբիւրը կը
վերադառնայ:

ԳԱՄԷՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Առեւտրական կամ սովորական գոր-
ծաւորութեանց մէջ, երբ մէկը ուրիշի մը
ապրանք կամ ու է առարկայ մը ծա-
խել ուղէ, ծախողը և գնող ծախուելիք
ապրանքին կամ առարկային արժէքին
վրայ մէջերնին համաձայնելէ վերջ, մին՝
« ես այսչափի այս ինչ ապրանքը ծախե-
ցի » և միւսն ալ « նոյն գնով ծախու ա-
ռի » կ'ըսեն և առեւծախի գործողու-
թիւնը կը կատարեն, առանց ուրիշ ձե-
ւակերպութեանց գիմում ընելու և այս-
պէս, տեղի ունեցած վաճառում մը ոչ
մին՝ և ոչ ալ միւսը չը կրնար եղծանել
(ֆէսի ընել) և կամ չեղեալ չը նկատ-
ուիր ցորչափ օրինական պատճառներ
մէջտեղ չըլլան:

Սակայն իճարէթէյնը վագժներու
(տե՛ս թիւ 14) համար, առեւծախի
գործողութիւն մը խել մը ձեւակերպու-
թիւններ կը պահանջէ՝ որ եթէ չը կա-
տարուին, վաճառումը օրինական հան-
գամանք ստացած չըլլալուն համար չեղ-
եալ կը նկատուի:

Ասոր համար է որ երբ օրինակի հա-
մար Գրիգոր տունը Կարապետ էֆէնտի
ծախած ըլլալը ապացուցանող թուղթ մը
տալով փոխարժէքը ստացած ըլլայ,
այդ վաճառումը չեղեալ կը նկատուի:
այսինքն թէ Գրիգոր էֆէնտի կրնայ
գաշինքը չը գործադրել և տունը ըստ
առաջնոյն իրեն վար գնել և Կարապետ
էֆէնտի ալ տուած գումար ետ առնել:
որովհետեւ իճարէթէյնը վագժներուն

վաճառման պահուն Միւթէվէլլիներուն
թէ՛ ներկայութիւնը և թէ՛ արածու-
թիւնը անհրաժեշտ են:

Հիմա բացատրենք թէ ինչպէս իճա-
րէթէյնը վագժ տուն մը կամ խանութ
մը ծախուած կրնայ նկատուիլ:

Նախ ըսենք թէ՛ ծախելը « ֆէրաղ »
ընելով այսինքն ծախուելիք տունը կամ
խանութը գնողին փոխանցել տալով
կամ տարբեր բացատրութեամբ վրան
գարձնելով տեղի կունենայ:

Ասոր համար ծախողը պարտաւոր է
Կ. Պօլսոյ մէջ, իր բնակած թաղին Մոխ-
րաբէն կենդանի ըլլալը հաստատող իլ-
մոխապէր մը առնել: այդ իլմոխապէ-
րը Պատրիարքարան կը տանի ու բազմա-
յին տուրքէ անվճար մնացած պարտքերը
տալէ վերջ, իլմոխապէրը քաւսիք ընել
կուտայ: (1) Այն տունը Պատրիարքարանի
կողմէ հաստատուած իլմոխապէրը կը
ներկայացնէ ծախելիք վագժին գտնուած
տեղւոյն թաղապետական շրջանակին
(պէլէտիյէ տայիրէսի): Հոն, իրմէ տու-
նին կամ խանութին մինչև այն օրուան՝
կալուածական տուրքին վճարումը կը պա-
հանջուի որ եթէ տրուած է ֆօյալներով
կապացուցուի, իսկ եթէ, տրուած չէ,
ամբողջովին կը տրուի: Այդ ալ կատար-
ուելէն վերջ, թաղապետութեան շրջա-
նակը իրեն նումէրօ մը կուտայ որպէս զի,
Տէժքերխանէի մէջ, իր վագժին նկատ-
մամբ կատարուելիք ձեւակերպութեանց
ետեւէն իյնալով, օր առաջ գործը լը-
մընցնէ:

Երբ թաղապետական շրջանակին հետ
գործը վերջացած է, քանի մ'օրէն Տէժ-
քերխանէ կը գիմէ և իրեն տրուած նու-

(1) Գաւառները, (ֆէրաղի) փոխանցումի
իլմոխապէրները Առաջնորդարաններու կող-
մէ թաւափ գըլլան:

մէրօն խաճեմէի մը կը յանձնէ որ պէտք եղած օրինական ձեւակերպութիւնները փութացնել տալէ վերջ, քաֆրիքի օրը նախապէս իրեն կիմացնէ:

Որոշեալ օրը՝ ծախող և գնող միասին Տէֆթերխանէ կերթան և քաֆրիք օտաւրի մէջ ձեռնհաս պաշտօնէին ներկայութեանը, ծախողը « շու գառար, զրուշա մուգապիլ խանէմի սոթում, պիթթամամ բարամը աշում, հապպէի վահիտէ ալաճաղըմ գալմամըշ տրը » և գնողը « գապուլ իթտիմ » կըսեն:

Այդ յայտարարութիւնները մասնաւոր տոմարին մէջ կարճանագրուին այսինքն տան սեփականութիւնը ալ ևս գնողին ըլլալը կը նշանակուի: Որպէս զի ծախու առնողը, ձեռքն դրական ապացոյց մ'ուներայ գնած տունը իրը ըլլալուն, հեօ-ճէթմալ կը տրուի և որուն թէսարուժ սէնէսի կ'ըսեն: Բնականաբար այդ սէնէտը նոյն օրը չկրնար տրուիլ:

Թաքիքի թուականէն առ առաւելն մինչև մէկ ամիս թէսարուժ սէնէտին իրեն կը տրուի և այսպէս տունը իրենը եղած կըլլայ եթէ երբէք, լոկ ձեակերպութեան համար, կատարած ըլլալը և հակառակը ապացուցանող թուղթ մը չիտայ ծախողին ձեռքը:

Գնողին կատարելիք ձեակերպութիւնները՝ ծախողին յար և նման են, Փերաղի համար 1000 ին 30 ծախք կառնուի:

Նէժի միւյֆ

Կան հայերի որ զաւակներնէն մին միւսներէն աւելի կը սիրեն, կամ յրստակ խօսելով իրենց բոլոր սէրը, գուրգուրանքը անդրանիկ կամ կրտսեր զաւակնուն վրայ կեդրոնացուցած են, և կուզեն հարստութիւննին միմիայն ատնց թողուլ:

Գիտէ՞ք ինչու. որովհետև անդրանի-

կը կամ կրտսերը ամենէն ուշիմը, ամենէն խնայասէրը և ամէնէն բարեսիրտ ու գործունեան է. մինչդեռ հարստութեան մեծագոյն մասը միւսներուն ձեռքը անցնելովը, գիտեն թէ, քիչ ատենուան մէջ, պիտի փճանայ և օրապահիկնին իսկ ճարելու անկարող պիտի ըլլան. համալուած են թէ՛ ժառանգաւորուն (ժառանգութիւնը ամբողջովին ստացողը) իրեն թողուած դրամը պիտի կրկնապատկէ և թէ միանգամայն այդ դրամով ժառանգաւորինն ալ, պէտք եղած չափով պիտի օգնէ:

Այդ նպատակին հասնելու համար միջոցի մը կը գիտեն զոր Օրէնքը թոյլատրած է և որուն նէժի միւյֆ կըսեն:

Նէժի միւյֆի ձեակերպութիւնները շէրիի դատարաններուն (Մուհաբէմէյի շէրիյէ) առջև և կամ նոյն դատարանին կողմէ գասիին միջոցաւ բնակալանի մէջ ալ կրնան կատարուիլ:

Նայեցէ՛ք ինչպէս կըլլայ.

Նէֆի միւյք ընողը անձամբ և երկու վկաներու ընկերակցութեամբ շէրիի դատարաններէն միոյն կը գիմէ և կամ գասիին քարաուղարի մը հետ նէֆի միւյք ընողին տունը կու գայ: Այս դատարանին առջև կամ տունը ձեակերպութիւնները միենոյն են:

Նէֆի միւյք ընողը խօսքը զատին ուղղելով. « Նոտած տունիս և այս տեղ (ուր որ դրամ, կարասիք, շարժուն ստացուածք ունի) գտնուած ամբողջ կահ կարասիքը, հագուստները և տան վերաբերեալ պղնձամանները. զոհարները ինձ չեն պատկանիր, այլ կըթօրս . . . էֆէնաիին. ես ատնց վրայ ունիմ իրաւունք կամ բաժին չունիմ և այս պահուս վրաս կրած հագուստէս զատ բան մը չունիմ: »

Այս յայտարարութիւնը գտաին, իր

քարտուղարին միջոցաւ Դատարանին մասնաւոր Տոմարին մէջ արձանագրել կուտայ և հոն ներկայ եղող երկու վճարողներն ալ տակը կտորագրեն ։ Այդ թուականէն քանի մը օր «Վերջ նէֆի միւլքի հէօմէքն ալ որ Դատարան և շէրիի Դատարանին կնիքը կը կրէ, ժառանգաւորին կը տրուի ։

Նէֆի միւլքի համար 150-200 դրուշ ծախք կը լայ ։

Վերոյիշեալ հէօմէթն, առաւել կամ նուազ տարբերութեամբ, հետեւեալ կերպով կը խմբագրուի ։

«Մահաբուհի Ղալաթայա միւզաֆէ Պէշիկթաշտա... մահաբուհի... նուսէթուլ խանէտէ միւթէմէրինէ թէպաաի տէօվէթ ալիէնին էրմէնի միլլէթի նիսվանընտան շախսը զիյի բաքիմտէ մահաբուհի իւլէսամի քէսան թարիֆլէրիլէ մուարրէֆ օլան Սրբուհի պինթի Ղուկասեան Մէճիսի Շէրիշէրիֆտէ խանէի մէզբիւրտէ միւթէմէքինէ թէպաաի միւշարիլէյահանըն միլլէթի մէրքումէսինտէն շախսը քէզալիք քէսանը մէրքումուսն թարիֆլէրիլէ մուարրէֆ օլան մէրքումէ Սրբուհիին լիէպէվէյն քըզ քարընտաշը նաութիկ պինթիլմէրքում Ղուկասեան Մարտիկ հուզուրընտա իբրարի թում վէ թարրիրի քէլամ վէ իֆատէի մէրամ իտուպ, խանէի մէզբիւրտէ վէ կէրէք... տէ պիր պապ մէնղիլ տէրունինտէքի պիճճիւմէ էշեա, մէնգուլթ վէ մէլպուսաթ վէ մէֆուլաթ վէ էսաաը պէյթ վէ ավանի վէ հիւլիյաթ պէնիմ օլմայըպ քըզ քարընտաշը մէրգումէ նաութիկին միւլքի օլուպ պէնիմ ասլա վէ գաթա ալաքա վէ մէտխալիմ օլմատըղընտան պաշգա էլէեվմ իւզէրիմէ լապիս օլտըղմ պիր քաթ քէօհնէ լիպաաըմտան զայրի իամի մալ ըլլաք օլընուր նէսնէմ եօք տըր տէյու մուքբիլէի մէրգումէ

Սրբուհիին սատըր օլան պիճճիւմէ քէլիմաթը մէշրուհընը քըզ քարնտաշը մէրքումէ նաութիկ տախի թահքիք վէ թաստիք իթմէքլէ մա վազը պիթթալլէպ քէթպ օլընուր ։

Ն ՅՈԳԱԹԼԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Բանը... Ինքը... Բանը...

Զարմանալի պիտի գտնաք անշուշտ այս խորագիրս, այնպէս չէ՞, սակայն երբէք չէ՞ք պատահած այնպիսի անձերու, որոնք խօսակցութեան միջոցին, իրենց միտքը բացատրելու համար բառեր կը փնտռեն և չեն գտնար, թէ իրենք կը յոգնին, եւ թէ իրենց խօսակցին սիրտը փորը կը հատցնեն «ըրը... բանը... ինքը... բանը բան պիտի ընէով» կը կապեն վերջապէս, եւ եթէ կըրնաս ըսածնուն իմաստ մը հանէ ։ Խորագիր մը փնտռելի ասոր, բայց ես չի գտայ ։ Առողջապահութեան հետ վերաբերութիւն ունի արդեօք ։ Տարակոյս չի կայ ։ Որովհետեւ մտային առողջապահութեան խնդիր մ'է այս, որով զբաղիլ կ'արժէ քիչ մը ։ Եթէ ընախօսներուն ըսածին հաւատալ պէտք է, մարդկային ուղղին մէջ մասնաւոր անկիւն մը կայ, ուր առարկաներու անունները կը մթերին, եւ որ ի պահանջել հարկին, մեր մտային կարողութիւնը անոր կը դիմէ, իր ուզած բառին անունը տալու համար ։ Արդ՝ այդ անկիւնը կարելի է կատարելապէս գոցուիլ, եւ կամ ընդհակառակը բոլորովին բաց եւ ազէկ վիճակի մէջ պահել ։

Մարդու մը կամ կենդանիի մը բնական կարողութիւններէն մին կամ ամբողջութիւնը բարւոք կացութեան մէջ պահելու համար շարունակ մարզանք պէտք է ։

Ինչ բան որ մշակէք, եւ ազէկ մշակէք, անիկա բարգաւաճ վիճակ մը կ'ստանայ, եւ այս մշակութիւնը որչափ կանուխէն սկսիք, այնչափ աւելի ապահով ճամբու մը մէջ դըրած կըլլաք ։

Մտային կարողութեան հետ անմիջական

առնչութիւն ունեցող այս տկարութիւնը ուղղակի մեր անհոգութեան հետեւանքն է, եւ մինք այնպէս կը կարծենք որ՝ ամենէն մեծ սլառասխանատուն ծնողներն են, որ անտարբեր անհոգութիւնով մը մոտիկ կ'ընեն իրենց զաւակները, երբ խօսակցութեան պահուն, անոնք առարկաներուն անունը, բանով... ինքով... կուտան, եւ երբէք չեն մտադրեր ուղղել:

Շատ անգամներ, եւ ասիկա գրեթէ 99% մեր սղտիկները փոխանակ. «Մայր ինծի պտուղ տուր, հաց տուր, բսելու. «Մայր ինծի բան տուր, սըւիկա ինծի տո՛ր», եւ այլն կ'ըսեն:

Այս սլառագային մէջ առաջին օրէն մեծերը պէտք են ուղղել եւ վարժեցնել զանոնք ըսելով. «Տղաս այդ ուղածդ կամ ցըցուցածդ պտուղ է, գլխարկ է կամ աթոռ է» եւ այլն. եւ մինչեւ սր տղան չի հաճի առարկային անունը տալ, իր ուղածը տալու չէ: Այսպէսով պիտի կրնաք իր մտային կարողութիւնը մարզել, զայն միշտ պատասխանելու պատրաստ վիճակի մը մէջ դնելով:

Նոյն իսկ չափահաս մը կրնայ ինքնին վարժութիւն ընել, որ չըլլայ թէ գաղափարը բացատրելու համար բառի մը տեղ ուրիշ բառ մը գործածէ: Կրնայ ըլլալ որ, կաստակով կամ առօրեայ տեսնուած անձերու հաղորդակցութեամբ, սովորական առարկայ մը, կամ անձնաւորութիւն մը եւ կամ գործողութիւն մը տարօրինակ անուններով կոչէ, եւ երբ պէտք ըլլայ այնպիսի աճերու հետ տեսնուիլ, որ անշուշտ պատշաճօրէն խօսակցելու է. այն ատեն չի պիտի կրնայ շուտով գտնել իւր ուղած բառերը: Ասոնց նման սլառագաններու շատ անգամներ պատահած ենք, եւ որքան գէշ կ'ազդէ մարդու վրայ:

Եւ ասոր համար խիստ ուշադրութեամբ վարուելու ենք մեր սղտիկներուն հետ, եւ ինչպէս քիչ մը առաջ ըսի, երբէք տալու չենք իւր ուղած մէկ առարկան, մինչեւ որ անունը չի տայ. նամանաւանդ թող տալու չենք որ խեղկատակութեամբ գիտցած մէկ բառին տեղ ուրիշ մը գործածէ:

ԱՐԱՔՍ

ՕՂԸ ԵՒ ՄԻՔՐՈՊՆԵՐԸ

ՄԻՔՐՈՊՆԵՐԸ

Միքրոպները — ահա անուն մը որ վերջին մի քանի տարիներէ ի վեր շատ անգամ խօսուելու եւ գրուելու արարկայ էղած է — միարձաճային եւ առանց կանաչանիւթի լուեր (algues uni-cellulaires et sans chlorophylle) են:

Անմահ Բասթօնի աշխատութիւններէն ի վեր օգին մէջ միքրոպներու գոյութիւնը անուրանալի է. անթիւ փորձերէ վերջ սա եղբակացութեան հասաւ:

1⁰. Թե հեղուկ մը երբ օդին փոփոցեմը գերծ մնայ, միեւնոյ բնաւ չպարուանկէր:

2⁰. Թե օդին այս փոփոցեմը մեզ են որ կը զսնուին միեւնոյներու սերմեր:

3⁰. Թե լաւ զտուած կամ քաղցուած օդը բնաւ միեւնոյ չպարուանկէր:

Այս փորձերը վերջնականապէս տապալեցին ինքնածին սերման (génération spontanée) վարդապետութիւնը որուն վրայ կ'արժէ վայրկեան մը կանգ առնել:

Հին ժամանակները եւ միջին դարու մէջ գիտունները եւ մասնաւորապէս բնագէտները կը հաւատային խնկածին սերման:

Խնկածին սերմում ըսելով կը հասկնային գործարանաւոր կենդանիի կամ բոյսի մը ստեղծումը անգործարանաւոր մարմիններէ, այսինքն ստեղծում մը առանց սերմի (germe). բուսական էր որ — կ'ըսէին — ջուրի եւ օդի յարակից տաքցուցած մարմիննուս մէջ խմորում յառաջ գայ, ունենալու համար բոյսեր եւ կենդանիներ: Նոյնիսկ 17^{րդ} դարուն մէջ շատեր կը ցուցնէին այն միջոցն որով կարելի էր յառաջ բերել գորտեր ճահճներու մէջ, ձագեր գետակներուն մէջ եւ այլն:

18 երրորդ դարուն մէջ այս տեսակ նախապաշարումները աւելի մեծ զարկ մ'ընդունեցին երբ աստղաբաշխական ուսման համար ծուռ սպակիներ շինուեցան. որով քիչ յետոյ մանրադիտակը, Leuwenhoeck մանրադիտակով դիտելով անձրեւի կամ բոյսի հետ խաշած ջուրի կաթիլ մը, հոն գտաւ հազարաւոր տարբեր տարբեր մանր կենդանիներ: Այս փորձիկները գիտուններու մեծ մասին համար ինքնածին սերմումով յառաջ

եկած էին. ուրիշ մի քանիներու համար ասոնք յառաջ եկած էին իրենց նմաններու բաժանումով բազմապատկութենէն, և իւրեքն հոգ կը կարծէր որ ասոնք կազմուած էին իրենց նմաններու միաց-րգներուն ըջիջներու հանդիպումով եւ միացումով:

1745 ին Needham լաւ մը դոցուած (°) ամանի մէջ ջուր եւ բոյսի կտրուածքներ կը դնէ ու կը տաքցնէ որպէս զի օտար սեր-մերը ջնջուին:

Քիչ օրէն մեծ զարմանքով կը տեսնայ որ ջուրին մէջ կը գտնուին դարձեալ հազարաւոր փոքրիկ կենդանիներ որոնք միմիայն յառաջ կրնային գալ — կ'ըսէր Needham — ինքնածին, սերումով:

Այս կարծիքէն էր նաեւ Ֆուսնայի բնագէտ-գրագէտը Buffon:

Սակայն Spallanyani խալալի անուանի գիտուն բժիշկը Needhamի փորձերը կըրկենց աւելի զգուշութեամբ եւ տեսաւ որ նոյն խիւ երկար ժամանակ վերջ՝ փորձի ենթարկած հեղուկը միջրոպի հետք մը չէր պարունակեր:

Needham կ'առարկէր որ Սքալանձանին երկար օրէն տաքցնելով կամ օդը եւ կամ ջուրը իւր յատկութիւնները փոխած ըլլար եւ լրով հետեւ օդին բազմապատկեան վրայ դեռ գաղաթար մը չունէին, Սքալանձանին չկրցաւ բացատրական կերպով հաստատել:

Touchetն ալ մինչեւ վերջերուն (1860) Needhamի կարծիքէն եղաւ բայց Բասդէօն 1860ին հիմնականապէս տալալից ինքնածին սերման գաղափարը եւ հաստատեց որ գոնէ ճիւղակ ունէ բոյս կամ կենդանի առանց սերմի չէ կարող յառաջ գալ, թէ բոլոր տպրող էակները ունեցած են իրենց նմանող ծնողը մը:

Ուրեմն միջրոպները ինչպէս նաեւ բոլոր բոյսերը եւ կենդանիները ինքնածին սերումով յառաջ չեն գար:

Միջրոպները իրենց ձեւերուն համեմատ 3 զլիւսուոր կարգի կը հաժնուին.

- 1°. Մանրագնդիկներ (microcoques)
- 2°. Ցուպածեկներ (batonnet)

Ա. ցուպիկներ (bactérinnes) Բ. ցուպակիկներ (bacilles)	Ցուպածեկներ (batonnet)
---	------------------------
- 3°. Թրքուկներ (vibrions)

Մանրագնդիկներ. — Ընդհանրապէս գընդակաձեւ են եւ ունին Պրովիտան շարժում (mouvement. Brownien) այս. գնդակները կը շատնան բաժանումով եւ բնաւ սփռներ չեն ունենար:

Եթէ իւրաքանչիւր գնդակ իրարմէ բաժնուած ըլլան Coccus կը կոչուին:

Եթէ համրիչի մը նման իրարու քով շարուած ըլլան diplocoques կը կոչուին:

Երբեմն ալ գնդակները խաղաղի ուղիղի մը ձեւը կ'առնուն. այս պարագային մէջ ողկոյզաձեւ մանրագնդիկ կը կոչուին (staphylocoques):

Վերջապէս երբեմն ալ խաչաձեւ 4 առ 4 կամ 8 առ 8 միացած են. այն ատեն Sarcines կը կոչուին: Մանրագնդիկները երբեմն գունաւոր կ'ըլլան օր. համար կաթին micracus prodigosusը որ կաթին կարմիր գոյն մը կուտայ:

Խմորում յառաջ բերող մանրագնդիկներէ իրր օրինակ յիշենք ferment lactiqueը. քաջաղ յառաջ բերող միջրոպը le microderma acéti եւայլն:

Ցուպածեկներ. — Ասոնք երկու կարգի կը բաժնուին. առաջինները՝ ցուպիկներ աւելի երկար են քան գնդակաձեւները. ընդհանրապէս երկու ծայրերը առած են եւ ունին մասնաւոր շարժում մը:

Երկրորդները այսինքն ցուպակիկները աւելի երկար են քան լայն. երբեմն շատ զգուշոր է միւսներէն վատել իրենց ձեւով բայց շատ կը տարբերին իրենց արտադրութեամբ. ցուպակիկները ցուպիկներու եւ մանրագնդակներու նման բաժանումով կը բազմանան, բայց ունին նաեւ սփռներ ինչ որ կը պակսի միւսներուն:

Այս ցուպակիկներէ ոմանք խմորում յառաջ կը բերեն, ուրիշներ փտութիւն. վերջապէս ուրիշներ ալ յառաջ կը բերեն տեսակ տեսակ հիւանդութիւններ, օր. համար հիւսածախի (tuberculeux) ցուպակիկը որ վարակւողներու ըրձաւնքին մէջ կը գտնուի, ասոնք չորնալով փոշիի նման օդին մէջ կը տատանին եւ այսպէս հիւանդութիւնը ամենադժուրին կերպիւ կրնայ տարածուիլ, որեւմն այժմ կը հասկնանք թէ ի՞նչ մեծ զգուշութեամբ պէտք է մեր տուններուն մթնոլորտը հակառակել, զերծ մնալու այս

միջրոտներու գէշ ազդեցութենէն:

Թրքականներ. — Ասոնք ալ ընդհանրապէս ցուսի մը ձեւը ունին բայց շատ թրթրուն են, մթնոլորտին մէջ ասոնցմէ գրեթէ ընաւ չկայ, որով չպիտի խօսինք ասոնց վրայ:

Փողոցները ջրելով կրնանք փոշիներէն մեծ մաս մը ջնջել:

Գալով տուներուն, պէտք է հակահետական նիւթեր գործածել, օր. համար կիր, զինքային աղեր, երկաթային, պղնձային աղեր, անիտ պորթ եւ այլն. նոյնպէս դիւրութեամբ կարելի է գործածել ասիտ ֆէնիք, հակահետակա համար աղտեղութիւն պարունակող տեղերը, սրահները, հիւանդի սենեակները:

Ռօսսիո

Մ. ՄԱԼԱԲԱՆ

ՊԱՆՏԻՉՊԱՆԱԿԱՆ

Պանակների (մօզ musacées)

(Հասարակ բիւ 17 հարցման)

Պանանները հասարակածային երկիրներու յատուկ բոյսեր են, որոնք տարածուած են տաք երկրներու մէջ: Աճելու եւ պտուղ տալու համար բարձրաստիճան տաքութեան եւ մթնոլորտային խոնավութեան պէտք ունին: Ասիկա Ս. Գրքին «բարւոյ եւ չարի գիտութեան ծառը» ըսած տունկն է, որուն պտուղներէն մեր նախածնողք ուտելով, աչքերնին բացուեցաւ, եւ իրենց մերկութիւնը տեսնելով, այդ ծառին տերեւներովը ծածկուեցան:

Պարտիզպանական տեսակետով 2 կարգի կը բաժնուին Պանանները: 1⁰. Ճաշակելի եւ մնաւտ պտուղով Պանանները, որոնք կանկառի պէս իրենց արմատէն արձակուած վիժանուտներով (թիւ) կը բազմանան, բայց հուշտ չեն տար: Այս վիժանուտները այնչափ շուտ կը մեծնան որ, երեք ամսուան մէջ կը ծաղկին եւ պտուղ կուտան, եւ մէկ տոնկէն ելած վիժանուտները, մէկ տարուան մէջ 50—60 քիւ պտուղ կուտան:

Այս առաջին կարգին տակ կ'երթան հետեւեալները. Եդեմափրգ (musa Paradisiaca). — Ադամաթուզ կամ թզուկերայ մօզ

(musa Sapientum). — Չինական մօզ (musa Sinensis):

Վերոյիշեալ 3 տեսակները, Հին դարերէ ի վեր կը մշակուին հասարակածային երկիրներու մէջ, եւ ծնունդ տուած են խիստ շատ ստորադաս տեսակներու, որոնք այլ եւ այլ անուններ առած են մշակուած երկրին համեմատ:

Այս ճաշակելի տեսակները կը գտնուին, առհասարակ Ափրիկէի ամեն կողմերը. Ասիոյ մէջ ծայրագոյն Արեւելքի կողմերը, Չին, Հնդկաստան եւլն. Կեդրոնական եւ Հարավային Ամերիկայի մէջ. Խաղաղական Ովկիանոսի կղզիներուն մէջ, իսկ Եւրոպայի մէջ կը գտնուի միմիայն Սպանիոյ Հարավային կողմը, ուր նուազ կը յաջողի:

Եդեմափրգերը առհասարակ 16—25 հար. մեթր երկայնութեամբ գգումի նման պտուղներ են, սրունցմէ ոմանք հազիւ թէ մէկ երկու անբերրի կուտեր կը պարունակեն իրենց մէջ, միւսները ամենեւին: Ասոնք հում չեն ուտուիր, այլ կը խաշեն կամ եփելով կերակուրի պէս կ'ուտեն, որ խիստ համեղ կ'ըլլան: Ծառը 3 մեթրի չափ երկայնութեան կը հասնի եւ մարդու ազդրի չափ հաստը կ'ըլլայ. գաղաթը կը գտնուին 10—12ի չափ երկայն կոթունով երկայն տերեւներ (1¹/₂—2 մեթրի չափ) եւ լայնութիւններ 30էն 60 հար. մեթր: Տերեւներուն մէջէն վայրահակ երկայն կոթունով սղկոյղածեւ յարկ յարկ ծաղիկներ դուրս կ'ելլեն, մանիշակագոյն պատեանով որոնց մէջի բուն ծաղիկները կ'ըլլան դեղին-ճերմակ:

Ադամաթուզի տեսակները նոյնպէս 3 մեթրի չափ կը բարձրանան: Տերեւի կոթունները, որոնցմէ կը կազմուի ծառին բունը, թուխ ծիրանեգոյն կ'ըլլան: Ծաղիկներն ալ վերիններուն պէս տերեւներուն մէջէն դուրս կ'ելլեն եւ վար կը կախուին, որոնցմէ յառաջ եկած պտուղները 5—12 հար. մեթր երկայնութեամբ կը կոչուին քուզ կամ մօզ եւ կ'ուտուին հում երբ հասունեալով կակուղցած ըլլան: Կուկարայի վրայ խորովելով (ֆիպպ) ալ կ'ուտուին, եւ շատ համեղ պտուղներ են:

Պօլոյ մրգավաճառներուն ծախած քօզը այս տեսակին կը վերաբերի:

Չինական պանանները Ադամաթուզներուն կը նմանին, իրենց պտուղը խիստ հա-

մեղ եւ սովորական թուղի չափ փոքր կ'ըլլան:

Երկրորդ կարգին կը վերաբերին այս պահանջները, որոնց պտուղները հազիւ թէ մտնու կ'ըլլան, ոմանք կ'ուտուին, ոմանք ոչ: Կը պարունակեն իրենց մէջ կուտեր, որոնցմով միայն կարելի է բազմատկել, որովհետեւ առաջին կարգին վերաբերածներուն պէս վիժանումներ չեն արձակեր իրենց արմատները, կամ խիստ քիչեր: Գլխաւոր տեսակները հետեւեալներն են. Լայնատերեւ Պանանենի (Musa Ensete). — Շիկաթայր Պանանենի (Musa Coccinea). — Վարդագոյն Պանանենի (Musa Rosacea). — Խաթագոյն Պ. (M. Glauca) — Սիդապանծ Պ. (M. Superba). — Փշաւոր Պ. (M. Speciosa). — Պճնագարդ Պ. (M. Ornata): —

Բոլոր այս տունկերը իրր զարդ կը մշակուին. որոնց մէջէն ամենէն վայելուչը Լայնատերեւ Պանանենին է:

Փիլիպեան կղզիներուն մէջ թելաբեր Պանանենի (M. textilis) կոչուած տեսակ մը կայ, որուն պտուղը չուտուիր, բայց կը մշակուի միմիայն իր հիւսկէնէն առնուած թելերուն համար, որոնք շատ զօրաւոր ըլլալով չուան եւ կտաւ չինելու կը գործածեն: Տունկը տեղացիք Ապակա (Abaca) կը կոչեն եւ իր թելերը փաճառակաւութեան հրապարակներու վրայ Մանիլայի Կանեփ անունով կը ճանչցուին, որ Փիլիպեան կղզիներու հարստութեան աղբիւրը կը նկատուի:

Պանանենիներու մշակութիւնը տաք երկիրներու մէջ մեծ կարեւորութիւն ունի, ինչպէս բարեխառն երկիրներու համար ցորեն, գարի եւլն: Բացի պտուղներէն, որոնք կուտուին, ինչպէս ըսինք, հում կամ եփած եւ կը կազմեն զովարար եւ առողջ սնունդ մը. մարդոց եւ անասնոց համար, կը գործածեն իր տերեւները շատ մը պէտքերու:

Բարեխառն երկիրներու մէջ Պանանենիները կարելի չէ բացօդեայ մշակել. բայց իրենց զարդարուն տեսքին համար մուտ գտած են ջերմոցներու (ճաւիհան) մէջ, եւ ամենէն աւելի մշակուածն է Լայնատերեւ Պանանենին. իսկ պտղատուներուն մէջէն Զինական պանանենին է որ աւելի ընդհանրացած է: Այս վերջինը երբ ջերմոցներու մէջ գետնի վրայ մշակուի, 12-15 ամիսէն կ'սկսի պտուղ տալ:

Բոլոր Պանանենիները կը պահանջեն սնունդարար հող, ինչպէս ցախաւելի հող (ֆունսա քոփրադը), առատ ջուր եւ օմինչեւ 35° տաքութիւն: Զերոցին օդը խոնաւութիւնով յագեցած ըլլալու է:

Ղ. ԲՈՒՏ

Հաղարջենի (ֆրենկ իզիւմի) եւ իւր մեակութիւնը

(Պասսախան քիւ 23 հարցում)

Հաղարջենին Եւրոպայի լեռնոտ երկիրներուն մէջ ինքնիրէն յառաջ կուգայ առանց մշակելու: Իր պտուղներուն ունեցած ընտիր յատկութեանց համար կը մշակեն պարտէզներու մէջ, որով եւ յառաջ բերած են շատ մը տեսակներ: Պտուղները կը գործածեն մամուռաւորապէս անուշեղէններ, չշորուպ եւ դոնդող պատրաստելու: Եւրոպայի մէջ առնոցմէ կը հաճեն նաեւ լիմոնի թթու (լիմոն քուզը, (acide citrique). եւ այդի չեղած տեղերն ալ տեսակ մը գինի կը պատրաստեն, զոր թորելով ընտիր օդի մը կուտայ:

Յանով յառաջ բերուած տեսակներուն մէջ ամենէն աւելի յանձնարարելիներն են հետեւեալները.

1. Կարմրագոյն պտուղով տեսակները.

Ա. Հոլանդական կարմրաքոյ հաղարջ (gro-seiller de Hollande à fruits rouges). — Երկայն ողկոյզով (սազըւմ), խոշոր հատերով, ընտիր տեսակ մ'է, եւ շատ պտղաբեր է:

Բ. Բալլեօի արգասաբեր հաղարջ (fertile de Palleau). — Խոշոր ողկոյզով, արգասաբեր տեսակ մ'է:

Գ. Վերսալական հաղարջենի (la versailleise). — Սրգասաբեր է վերիններուն պէս, երկայն եւ խոշոր ողկոյզով, պտուղները քիչ թթու են եւ խոշոր:

Դ. Մեյս Վիգորիա կամ Վիգորիական հաղարջենի (Mays Victoria). — Խիստ ընտիր յատկութիւններով, խոշոր հատիկներով յամրահատ (ուշ համոռ) տեսակ մ'է, որուն պտուղները կարմիր եւ ամենէն քիչ թթու է:

2. Սպիտակ կամ վարդագոյն պտուղով տեսակները.

Ա. Հոլանդական կամ Անգղիական. — խիստ արգասաբեր, ողկոյզը երկայն, խշտ հատիկներով:

Բ. Փափանցիկ պտուղով հաղարջենի (à fruits transparents). — խիստ արգասաբեր, հատիկները միջին խոշորութեամբ, բայց առաջին տեսակէ են:

Գ. Վարդագոյն կամ մարմնագոյն պտուղով հաղարջենի (à fruits rose au carné). — Հին տեսակ մ'է ասիկա, որուն պտուղները բաց վարդագոյն կ'ըլլան, բաւական գեղեցիկ, բայց չափ թթու:

Կլիմա. — Հաղարջենիին նախնական բնակավայրը Եւրոպայի քիչ չափ բարձր լեռներն ըլլալուն, կլիմայի ընտրութեան մասին երբեք գիտարահած չէ թէ եւ, բայց բարեխառն կլիմաներու մէջ իր բերքը աւելի ընտիր տեսակէ կ'ըլլան: Հիւսիսային ցուրտ երկիրներու մէջ պտուղները չափ թթու կըլլան, իսկ հարաւային երկիրներու մէջ, իր բուսակաւութիւնը տաքութեան պատճառաւ տկար ըլլալուն, իրմէ փնտռուած աղէկ յատկութիւններէն մաս մը կը կորսնցնէ: Ուստի իր ամենէն յարմարագոյն մշակավայրը այս երկու ծայրայեղութեանց մէջ կը գտնուի:

Հող. — Թէեւ ամեն տեսակ հողերու մէջ հաղարջենին կ'աճի, բայց ամենէն աւելի կը յարմարի միջին թեթեւութեամբ հողերու մէջ, որոնք ամուրուան եղանակին մէջ չարունակ տամուկ (նեմ) կը մնան սաւանց չափազանց խոնաւ ըլլալու:

Մշակութիւն. — Բազմապատկուքեան միջոցներ. — Հաղարջենին շատցնելու համար կը գործածեն *saucespau* (saucespau marcotte) միջոցը, այսինքն, մայր տունկին քովէն բուսած մէկ ոտը, կամ իր ճիւղերէն մէկը առանց բաժնելու կը պառկեցնեն եւ կը թաղեն հողին տակը, միայն ծայրը դուրս ձգելով, որ երբ արմատաւորի այն տուն կը կտրեն եւ կը զատեն մայր տունկէն: Կը գործածեն նաեւ ստեղնատում (շիշեֆ, bouture). այսինքն՝ մայր տունկին արմատին վրայէն բուսած վիժանուտները (քիւն) ինչպէս եւ ոտները կը կտրեն եւ կը տնկեն: Հունուորն ալ կը գործածուի թէեւ, բայց այս միջոցը վերապահած են միայն նոր տեսակներ յառաջ բերելու:

Տաշտաթաղի կամ ստեղնատումի միջոցնե-

րէն որն ալ գործածէք, պէտք չէ խելոյն իր վերջնական տեղը տնկել. այլ առաջին տարին տնկարանի մը մէջ արմատաւորելէ վերջ, հետեւեալ տարին հանելով իր որոշեալ տեղը տնկելու է:

Եւրոպայի մէջ շատ տեսակ ձեւեր կուտան այս թուփին: Պատերու երկայնութեանը կը տնկեն, եւ որմնայեց (éspalier) ձեւ մը կուտան. այսինքն՝ թուփին ճիւղերը պատին երկայնութեանը կը տարածեն, զանոնք ծռելով եւ կապելով: Կամ պարտէզին մէջ տեղաւնւորելով, անթի (աման) կամ կոնի մը ձեւը կուտան, եւ կամ ուրիշ այլեւայլ ձեւեր: Որովհետեւ հաղարջենիին արմատները գրեթէ արմին (collet, պողազ. ծառի մը արմատը եւ բունը իրար միացնող տեղը, որ անմիջապէս հողին երեսը կը գտնուի) չափ մօտերէն կը ծնին եւ կը տարածուին հողին երեսօքը. եւ արմը շարունակ հողէն վեր կը բարձրանայ. արմատները հետզհետէ երաշտութեան (չորութիւն) մատնուելով, ծառն ալ կը տկարանայ եւ հասոյթը կը նուազի: Ասոր առաջը առնելու համար, ոմանք 4-5 տարին անգամ մը թուփերը տեղէն կը հանեն եւ նորէն կը տնկեն. ուրիշներ՝ նախ մէկ միթր լայնութեամբ փոսեր կը բանան, որոց խորութիւնը 20 հար. մեթրի չափ կըլլայ, եւ կը տնկեն փոսերուն մէջ տեղը հաղարջենիները. եւ ամեն տարի երբ հողը մշակեն, թուփերուն բոլորովն 5-6 հար. մեթր թանձրութեամբ հող կուտան:

Հաղարջենի մշակողներէ շատեր կը թողուն թուփերը ըստ կամա մեծնալ. եւ եթէ ուրիշներ մերթ ընդ մերթ կը յօտեն (պուշաւաւս), պատճառը այն է որ, ճիւղերը ընդամահուելով չափ տեղ չի բռնեն: Բայց ամեն տարի եթէ կանոնաւոր կերպով յօտէք հաղարջենիները, իրենց բերքը առատ, կանոնաւոր եւ մանուշակ պտուղները խոշոր եւ ընտիր որակով կըլլան:

Հաղարջենին ալ ուրիշ պտղատու ծառերու պէս, կը պահանջէ որ, զինքը անուցանող հողը փխրուն ըլլայ, վստմորոյ՝ պէտք է ամեն տարի, գարնան հերկել, եւ ամառը գէթ մէկ անգամ բրնձ (չափաչաւազ). Այս վերջին գործողութեան ժամանակ ուշադրութեամբ կտրել հանելու է արմատներուն վերայէն ծնած բոլոր վիժանուտները, որոնք

մնալով թուփին հիւթը կը ծծեն եւ զայն կը տկարացնեն։ Այս վիժանուտները կտրելու համար, կը գործածեն մէկ կողմը ուրագի (feker) պէս տափակ բայց նեղ եւ ծայրը սուր բրիչ (չափա) մը, երկայն կոթի մը վրայ հաստատուած։

Պէտք է երկու տարին անգամ մը աղբել հաղարջներն, ապա թէ ոչ իր բերքը քիչ եւ պտուղները մանր կը մնան։

Սեւ հաղարջնի կամ քասի (Cassis)

Այս թուփին նախնական բնակավայրը Զուիցերիոյ եւ Շուէտի լեռները եղած են։ Իր պտուղները խիստ քիչ անգամներ հում կ'ուտեն։ Ընդհանրապէս անոնց անուշաբոյր համին համար, կը պատրաստեն քասիս կոչուած տեսակ մը մրգովի, որուն մէջ կը խառնեն նաեւ նորածին տերեւները, որոնք եւս նուրբ եւ անուշաբոյր համ կ'ուտան ըմպելիին։

Սեւ հաղարջնիին կ'ախորժի զով եւ թեթեւ հողերէ, կը սիրէ աւելի կրախառն կուլային հողերը։ Բայց զուտ կուլային հողերուն մէջ չի յաջողիր։ Ողկաւզաբեր հաղարջնիին պէս բարեխառն կլիմաներու մէջ աւելի աղէկ կը յաջողի։ Մշակութիւնն ալ ճիշդ անոր պէս է։ Ամեն տարի գարունին հողը հերկելու է, եւ այս գործողութեան ժամանակ արմատներուն բոլորովը 5—6 հար. մեթրի չափ հող լեցնելու է։ Ամառը 2—3 անգամ բրելու եւ վիժանուտները կտրելու է, եւ տարին անգամ մը աղբելու է։

Տեսակ մ'ալ կայ, որ փշալից հաղարջնի կը կոչուի (groseiller épineux). եւ որուն նախնական բնակավայրը Անգլիա է։ Բազմաթիւ տեսակներ յառաջ բերած են, եւ ամենն ալ զրեթէ իրենց պտուղներու գոյնով կը տարբերին իրարմէ, եւ կամ ուսնք ողորկ, այլք աղւաւաւոր կըլլան։ Ոստերուն վրայ սուր եւ շատ փուշեր կը գտնուին։ պտուղները ողկոյզի վրայ չեն, այլ հատ հատ առանձին կը բուսնին։

Մշակութեան եղանակները վերիններուն պէս են։ Ստոր պտուղներն ալ գրեթէ հում չեն գործածեր. իրենց համին համար, կարգ մը կերակուրներու մէջ կը գործածուին իբր համեմ, երբ տակաւին կանաչ են։ Անգղիացիք կը պատրաստեն նաեւ տեսակ մը ձմրու, որ շատ համեղ կըլլայ։

Ղ. ԲՈԼՍ

Տէր Խմբագրապետ.

Պատ. հոյաթերթիդ մէջ յաճախ կարգաւորվ ձեր կողմէ գրուած մասնագիտական յօդուածները, նամանաւանդ պարտիզպաններու յատուկ յօդուածները, շատ հաճոյք կ'զգամ։ Իմ ալ զբաղումս ներս քիչ ու շատ ծառերուն հետ ըլլալուն հետաքրքրութիւնս ալ աւելի կը շարժի զանոնք կարգաւոր։

Կը տեսնեմ ձեր Պատ. թերթին մէջ որ կը հրատարակէք նոր նոր գարմաններ, ծառերու ու ծաղիկներու յատուկ գիտական հարցեր, որոնց պէտքն անհրաժեշտ է։ Այդ կողմէ գնահատելի է ձեր ծառայութիւնները։

Բայց ես ալ հարցում մը պիտի աւելցնեմ անոնց թւոյն վրայ, որուն համար միշտ հիմա շատ մը իրական փորձերու ձեռնարկելով չեմ յաջողած։ Կը յուսամ թէ զայն հրատարակելով ձեր թերթին մէջ ոչ միայն զիս շնորհակալ պիտի ընէք, այլ մեծ ծառայութիւն մը ըրած պիտի ըլլաք սեղանոյ ընդհանուր պարտիզպաններուն։

Գիտէք որ ծառերուն ու ծաղիկներուն թշնամի շատ տեսակ թրթուրներ ու միջատներ կան, ասոնց կարգէն են նաեւ տեսակ մը ուղեք, սպիտակ, գլուխը սեւ հաղիւ մէկ սանդիւմթր մեծութեամբ, որ ընդհանրապէս պատուաւորուած ծառերու նամանաւանդ խնձորենիներու, սալորներու տանձենիերու, եւ այլն տեսակ ծառերու պտուղներուն մէջ գոյութիւն ստանալով, պտուղը մէկ կողմէն կը ծակեն ու վար կը ձգեն, ահա այս երեսէն տարուէ տարի մեր պարտիզպաններու կորուստը մեծ եղած է, եւ կը լինի ալ։ Ամենաընտիր սրտղատու ծառերն իսկ ենթակայ են այս պատուհասին։

Կը կարծեմ թէ ասոնք գարնան գոյու-

Թիւն կ'ստանան, ծառերու ծաղիկները բացուած միջոցին կարգ մը թիթեռնիկներ, բզէզներ մեղուներ ու միջատներ կուգան կը թառին ծաղիկներու բաժակներուն մէջ հիւթը ծծելու համար, և հոն փոքրիկ սերմ մը թողլով կը հեռանան. ահա այդ սերմերը հոն աւելու ու տաքութեան ազդեցութեամբ գոյութիւն ստանալով, քանի պտուղը մեծնայ ինքն ալ զօրանալով պտղին կուտի միջուկը կուտէ, և զայն վար կը ձգէ. ես մինչեւ հիմա չատ մը ծառեր այս պատուհասէն ազատելու համար, դարնան անոնց ծաղիկները բացուած ատեն, սակը կը ծխէի ծծումբ, քափուր և այլ ազդու ծխանելիքներ խառնելով ուրիշ նիւթերու հետ. որպէս զի անոնց հոտը այդ տեսակ վնասակար բզէզներու ու ճիւղներու հոն թառիլը արգիլէ, երբեմն ալ նախով խառն օճառի կամ միսրի ջուր կը սրսկեմ անոնց վրայ, թէեւ այս դարմանները օգտակար կողմեր ունին ծառին վրայի թրթուրներու ու միջատներու հաւկիթները ջնջելու, սակայ բուն նպատակին չեն ծառայեր. ուստի եթէ կայ աւելի ազդու դարման մը այս պղտուղներու ախտահար թշնամիները անհետացնելու, հաճեցէք ձեր Պատ. Թերթին մէջ հրատարակելու. Կը խոստանամ ես ալ չատ մը իրական փորձերովս տեսած ասոնց նկատմամբ հանրօգուտ նիւթերու մասին երբեմն զրելով, ծառայել ձեր Պատ. Թերթին:

Այնքապ

ՆԵՐՍԷՍ Գ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԽՆԴԻՐ Գ.

Ինն հատ միեւնոյն թուանշաններ, զոր օրինակ ճեր այնպէս կարգադրել որ հազար ներկայացնեն, (թուաբանական սեւէ նշան կրնայ գործածուիլ):

Տ. ՊՕՋԱՃԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԱՆԻՁԷԴ

Առէք 25 կում ածխածն, ջուրով լուացէք եւ չորացուցէք. թեթեւ կերպով ծծեցէք, յետոյ $\frac{1}{2}$ լիթր ալքոլի մէջ թրջոց դրէք մինչեւ 24 ժամ. Պարզուտէ անցուցէք, եւ աւելցուցէք վրան 750 կում շաքար, որ պէտք է առաջուց քիչ մը ջրով շուռուտ չինել, եւ բերանը գոցեցէք: Այս խառնուրդը երբեմն ուժով ցնցեցէք, եւ 15 օր այսպէս ձգելուդ վերջը, կրկին պարզուտէ անցուցէք: Հիմա շիշերու մէջ քաշեցէք, եւ անոնց բերանը խցանով (մանքաւ) աղէկ մը գոցեցէք, չի ջարդուած յարգի կամ խոտի մէջ փաթեցէք եւ զրէք յարմար ամանի մը մէջ, (զոր օրինակ կազի թիթեղէ սնտուկի մը մէջ, կապի թէնէքէ) շիշերը մէջը դրէք, եւ իրենց բարձրութեան 3 քառորդը ջուր լեցուցէք, այսինքն պարանոցէն (պօղապ) մէկ երկու մատի չափ վար. կամաց կամաց տաքցուցէք, եւ ջերմաչափով ջուրին տաքութիւնը նայեցէք, երբ 60 աստիճանի ելնէ, այն ատեն կրակը ծածկեցէք քիչ մը, եւ մինչեւ 1 ժամ ջուրին տաքութիւնը 60 աստիճան բըռնեցէք, յետոյ վար առէք եւ թողուցէք որ ինքնին սրաղի: Ըմպելիները՝ այս կերպով կամաց կամաց մինչեւ 60 աստիճանի տաքցնելով, եւ յետոյ կրկին կամաց կամաց սաղեցնելով կը նրբանան, եւ հինցած ըմպելիներու յատկութիւնը կ'ստանան: Եթէ այս գործողութիւնը չի կատարէք, պէտք է առ նուազն 6—7 ամիս սպասել, որ անիզդը խմուելու աստիճան նրբանայ: Վերոյիշեալ կերպով պատրաստուած անիզդը թէեւ աստորժահամ կըլայ, բայց Պոստոի անիզդին չի հաւասարիր: Եթէ կուզէք որ ձեր անիզդը այդ նորը համը ստանայ, աւելցուցէք վրան պատիանի խկութիւն (խաւն սը պասխան, Զինական անխօն, որու Տաճկութեն երջըզ անխօնը կը գուրցեն) 1 կում, մշշիւնկոյզի խկութիւն (խաւն սը միւսֆ) մէկ երկու կաթիլ վանելափ երփնալոր (դիւնդիւն սը վանիյը), քանի մը կաթիլ դարձիկնեկի խկութիւն (խաւն սը ֆանի) 2—

3 կաթիլ նարնջածաղկի խկութիւն (եսանս ռը նեռօլի) 2-3 կաթիլ:

Երբ այս խկութիւնները աւելցունէք տնիւզէդին վրայ, ընտրեւագոյն տնիւզէդ մը պատրաստած կըլլաք, եւ որ կը հաւասարի Պօռտոի տեսակին:

Միմիայն խկութիւններով ալ կարելի է ընտիր տնիւզէդներ պատրաստել, որոնց մասին պիտի գրենք յարմարագոյն առթիւ:

ԱՐԱՔՍ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ՏԻԺՕՆԻ ՀԱՄԵՄ ՀԱՅ

Առէք 100 տրամ աղէկ մեղր, եռացուցէք եւ 100 տրամ ալ առուի (րեֆալեզ), իրար խառնեցէք փրփրացուցէք, եւ կրակէն ետ քաշեցէք: 200 տրամ հաճարի ալիւրը սեղանի մը վրայ լեցնելով, մէջտեղը խառնոյ մը ձեւացուցէք եւ քիչ քիչ լեցուքէք մեղրն ու առուիւր, եւ քիչ մը կաթի մէջ հալած 7 տրամ բօքսաւ աւելցուցէք, հիմա եւ լաւ մը խառնեցէք: Յետոյ առէք մէկ տրամ մեխակ (ֆարանգիլ) 2 տրամ դարիճենիկ (քառչիւն), 2 տրամ գինձ (ֆիշնիշ), 5 տրամ անխօն, 1 տրամ նարնջի կամ լեմօնի արտակեղեւ եւ 1 տրամ մըշիլընկոյդ. որոնք պէտք է լաւ մը փոշիացնել:

Թրեցէք հիմա ձեր խմորը ասոնցմով. եւ երբ ալ խմորը ձեւաքերտուղ չի փակիր, այն ատեն բացէք խմորը, ծալեցէք (խաք խաք ըրէք), նորէն բացէք, եւ քանի մը անգամ կրկնեցէք այսպէս մինչեւ որ խմորը լաւ մը հասուննայ, եւ զետակի մը ձեւը տալով կողովի մը մէջ դրէք, եւ պահեցէք 4-5 օր զով տեղ մը: Խմորը կտրտելէն առաջ, եթէ կուզէք կրնաք աւելցնել քիչ մը անժէլիք (մեշիֆ չիշէի), լիմօնի կամ նարնջի արտակեղեւի անուշ, որ պէտք է խիստ բարակ կըտրուած ըլլայ: Եւ դրէք ձեր խմորը կաղապարներու (գալըպ) մէջ, եւ երեսը քսեցէք հակիթի ճերմկուց, եւ կամաց փուռի մէջ եփեցէք, երբ դուրս քաշէք, փայլեցուցէք հետեւեալ ուղրկելով (միշա), (Տես Հան. Թիւ 8, երես 127):

ՏԱՆՏԻԿԻՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Մամուրեք-իւլ-Ազիզ. — Խ. Բ. — Ստացանք ձեր նամակը: Շնորհակալութիւն: Ձեր որ ոչ հասցէին պիտի դրկուին թերթերը: Ձեր հարցումները որք ուրիշ տեղերէ ալ ուղղուած են, պիտի ընդունին իրենց գոհացուցիչ պատասխանները:

Իզվիւր. — Յ. Կ. Զ. — Ձարմանալի՛ բան, Յ. Կ. Զ. անունով բաժանորդ չունինք:

Կելիպօլու. — Կ. Վ. — Ձեր պակասութիւնը դրկեցինք:

Այնքապ. — Գ. Պ. — Ձեր ցոյց տուած պակասութիւնը դրկեցինք:

ՀԱՐՑՈՒՄ

Խորով էֆ. Բէշիշեան. — Հետեւեալ հարցումները մեզ ուղղած է Մամուրեք-իւլ-Ազիզէն:

Թիւ 34. — Ծառերը չորցնող թրթուրները ինտո՞ր կրնանք ոչնչացնել: Միջոցը կո՞յսա անիժետաներէն խաշտեղու:

Թիւ 35. — Ընտիր թէյը ինչպէ՞ս ճանչնանք. հոս տեղի թէյերը բոլորը խարդախուած են կ'ըսուի:

Թիւ 36. — Անաբերի սեւ — եթէ կուզէք կապոյտ — մեղանը ինտո՞ր կրնանք պատրաստել. դպրոցականներուն չափ պէտք կըլլայ:

Թիւ 37. — Վարդին փափուկ կուրծը ծակծկող ու զայն իսպառ չորցնող ճանճը — կամ անոր մօտ արարած մը — կրնա՞նք միթէ փճացնել:

Պաս. — Թիւ 34. 37ին: — Միջառատապան դեղերու վրայ գրեցինք Թիւ 10 Հանրագիտակի մէջ. բայց կրկին ընդարձակօրէն կը խօսինք այդ նիւթին վրայ:

Միւսնոյն պատասխանը նաեւ Այնթապէն Ն. Գ. Ս. — Եւ Զնացեալ 35րդ եւ 36րդ հարցմանց ալ մօտաւորապէս պիտի պատասխանուի:

Թիւ 38. — Կէլիպօլուէն Յ. Տէր-Յովսէփեան հետեւեալ հարցումը կ'ընէ:

Որչափ ալ ձեզ հարցումներով պաշտօնէք, ցինք բայց պարտիք ներողամիտ գտնուիլ սա

հետագայ հարցմանս որ խիստ օգտակար է մանաւանդ նպարտվածառներու համար: Ահաւասիկ:

Ամբիան սկիզբէն ի վեր ճանճի եւ մծեղի բանայիր է դարձեր խանութի հազարաւոր ճանճեր մծեղներ կը վիտտան խանութին մէջ բզզալով տոգալով, աղմուկ մըն է կ'երթայ, ասոր վրէժն պէտք է որ դիմանայ արդ ասոր դիւրութիւն մը խնդրելով կը խնդրեմ... եօթնագլխին վիշապի պէս եթէ հատ մը սատկեցնես տասը հատ կ'աւելնայ եւ այսպէս շարունակարար. ինչպէս ըսի, եթէ կարելի է ասոր ամենաազդու մէկ միջոցը մեզի պէտք է իմացնէք՝ որ ազատինք աս չարածճիններու ձեռքէն: Հարցմանս՝ ըստ կարեւորոյն քիչ մը անապարանօք պատասխանեցէք:

Մեծ. Տիգրան Էֆ. Պօղանեանի Բ. խնդիրը — Ձոր լուծած են հետեւեալ կարգաւ Պ. Պ. Պիմէն Ձորդարեան, Չ. Պէրպէրեան եւ Կեդրոնական վարժարանի անանուն աշակերտներէն մէկը. իսկ Պէշիկթաշի աշակերտներէն Նշան Խուզիկեան միայն փորձը գրած է: Հոս կը դնենք Պ. Պիմէնի լուծման օրինակը. որ ամենէն յաջողակը գտնուած է:

Լուծումը. — Առնենք որ եւ է ուղղանկիւն եռանկիւն մը՝ որուն երեք կողմերուն չափը երեք յաջորդական թիւեր են թաղրենք, ուստի՝ ամենէն փոքր կողման եթէ x ըսենք, այն ստեն ալ հակուղիղ միւս կողմը պիտի ըլլայ $x+1$, իսկ հակուղիղը որ կողմերէն մեծագոյն է պարտի լինիլ $x+2$:

Արդ ունինք ուղիղանկիւն եռանկիւն մը որուն մէկ կողմն է x , միւսը $x+1$ եւ Գը $x+2$, այսինքն երեք յաջորդական թիւեր, ուրեմն եթէ x ին արժէքը գտնենք, ուղած եռանկիւննիս եւ թիւերը գտած կըլլանք:

Ասոր համար կը դիմենք հետեւեալ տեսութեան «Ուղիղանկիւն եռանկեանց հակուղիղին քառակուսին հաւասար է միւս երկու կողմանց քառակուսիներուն գումարին» որով երկրորդ աստիճանի հաւասարութիւն մը կ'ունենանք.

$$\begin{aligned}(x+2)^2 &= x^2 + (x+1)^2 \\ x^2 + 4x + 4 &= x^2 + x^2 + 2x + 1 \\ x^2 + x^2 + 2x + 1 &= x^2 + 4x + 4 = 0\end{aligned}$$

$$\begin{aligned}x^2 - 2x - 3 &= 0 & x &= \frac{2 \pm \sqrt{4+3}}{2} \\ x' &= 3 & x'' &= -1\end{aligned}$$

Արդ՝ ուրեմն փոքր կողմը 3 է, հետեւաբար միւս կողմը 4 եւ հակուղիղը 5 եւ յիշուի փորձով ալ ճիշդ է $5^2 = 3^2 + 4^2$:

Ուրեմն պատասխան. յաջորդական երեք թիւերն էին 3, 4, 5. որոնցմով կարող ենք ուղիղանկիւն եռանկիւն մը կազմել:

Թէեւ $x'' = -1$ պատասխանն ալ ճիշդ է սակայն անորոշ թիւեր են, — 1, 0, 1 եւ ճիշդ է որ $(1^2 = -1^2 + 0^2) = 1$, եւ սակայն անկարելի է ունենալ այդպիսի եռանկիւն մը իսկ:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ ՄԸ

Հաճեան Յակոբ էֆէնտի զեկոյց մը տուած էր մեր Գրաչարապետին՝ որպէս զի թերթիս մէջ տպուի, թէ՛ ինքը կը հրաժարի Հանրագիտակի մէջ գրելէ, երբ զայս տեսանք վարձանցանք, եւ ըսինք թէ Հաճեան էֆէնտի կը նմանի այն թռչնոյն որ բոյն չինել կաշխատի, եւ երբ չինէ բոյնը՝ կը հօտի կոր ըսելով, կը փոխէ տեղը, եւ նորէն բոյն չինելու կը ձեռնարկէ:

Թռչնիկը կը կարծէ թէ հոտը բոյնէն է, չի գիտիր թէ իրմէն է, այս մեր ըսածը հաստատելու համար նոր փաստի պէտք չիկայ: Հանրագիտակի 13րդ թիւի մէջ Հաճեան էֆ. զրաճը անգամ մը աչքէ անցնողը կը համոզուի մեր ըսածին ճշմարտութեան:

Բայց որովհետեւ ձեռնարկած գտնուեցանք անգամ մը այդ ճիւղին, պիտի ջանանք աւելի գրօնեցուցիչ եւ հրահանգիչ կերպով ներկայացնել զայն մեր Պատ Ընթերցողաց:

Իսկ գալով մեր խոստումը կատարելու կէտին. այսինքն՝ հետզհետէ թերթերնիս ճոխացնել տուանք բաժնեգիրն յաւելման. ահաւասիկ ի մօտոյ մեր բաժանորդներուն պիտի տանք ամիսը անգամ մը Հանրագիտակի առաջին չրջանի շարունակութիւնը՝ խմբագրութեամբ Ա. Լուսինեան էֆէնտի, որ քանակէն վերջը պիտի ձեռնարկենք ուրիշ ճիւղի:

ՎՐԻՊԱԿ 15 թիւ Հանրագիտակի մէջ. Ո. զոնայիս ծծմբաս (Sulfate de soude) կարգաւ օգնանի ծծմբաս:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՄԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԽՄԻՐՁԻ

Կ. Պոլիս Ֆնտրեան խանի տակ թիւ 3

Վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ գեղօրայք. վիրարութեան դործիքներ Անգղիական եւ Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեաքներ, պինիներ եւ հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով, Լ. Արսլանեան եւ Ս. Խմիրզէ Ընկերութիւնը երկար առեւնէ անձնական փորձառութիւններ ունին: ամէն ջանք եւ աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախողներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրեմք գաւառաց համար, որոնց կը զրկենք գեղօրայք ամենայն արագութեամբ, թարմ եւ մատչելի գներով:

Չարաճճի միւլկներու եւ լուերու եւլն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած ենք ուղղակի Տալմացիան, որուն համար մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրեմք յարգոյ հասարակութեան:

ՆԱՅԵՑԷՔ ՓՆՏՈՒՆԵՑԷՔ

Ձեր տունի եւ խանութի անկիւնները, եթէ հին գրքեր եւ բուլեր ունիք՝ բերէք Ձարդարեան Գրատունը, ուր տեղ չառ լաւ գիներով կը գնուին, աղէկ փնտուեցէք, եթէ կ'ուզէք ծախել փոշիի տակ մնացած գրքեր ու բուլեր:

ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐ (ՓՈՒԼ)

Հաւաքածոյի (գօլֆսիօն) համար

Պատիւ ունիմ ծանուցանել թէ՛ Ղաւաթիոյ Տէմիր-խանէ, Կ. Պոլիս Էսկի-Չապիթէ ճատտէսի, թիւ 30 խանութը փոխադրուած եմ, և ըստ առաջնոյն՝ հա-

ւաքածոյի համար նամակադրօջմի առեւտուր կ'ընեմ գոհացուցիչ գիներով, եւ միանգամայն մեծ ու փոքր քանակութեամբ: Պատրաստ եմ թղթակցութեամբ ալ կատարել սոյն գործողութիւնը:

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐԱՅԵԱՆ



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղաղ սկեյ խմբի քրամ կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Չինական, Հնդկական, Ճապոնի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Թէյին նոր հունձքը սկսած է գալ:

Չգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

Հանրապետութիւնը հրատարակուի ամէն Շաբաթ օր կանոնաւորապէս.
Կը պարունակէ Գրական, Դիտական, Երկրագործական, Տնտեսական,
Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր.
Երկրագործական, Արհեստական ու Իրաւաբանական հարցումներու միշտ
պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով.
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրէ-
նութիւն Հանրապետութեան լրագրի.

Կ. Պոլիս, Զանգարեան Գրատուն, Չազմագնդար-Խօզունչու թիւ 50

در علیّه ده چماغچیرده ۵۰ نومرولی زارطاویان کتبخانه سنده (حاراقیداق) مجموعه علوم غزیه سی
اداره سنده

Հանրապետութիւնը պատրաստ է ընդունել ամէն տեսակ ծանուցումներ, ազդա-
րարութիւններ, խիստ գիւրամատչելի պայմաններով: Հրատարակիչներէ կը
խնդրուի իրենց երկերէն զրկել հրկու օրինակ, զորո պիտի ազդարարենք
հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պողարեան
ԱՏԱ-ԲԱԶԱՐ — Ստեփան էֆ. Սափրիչեան
ԱՏԱՆԱ. — Միսաք էֆ. Գաղաղեան:
ԱՐԱԲԿԻՐ — Յ. Պ. էֆ. Մանուէլեան.
ԱՖԻՕՆ-ԳԱՐԱԿԻՍԱՐ — Սիմոն էֆ. Սի-
նանեան.
ԱԹԷՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան
ԳՈՐԻՏ ՊԷԼԷՆ — Արթ. Տ. Ստեփան քա-
հանայ Մկրեան.
ԳԱԿԻՐԷ. — Մ. Պաղասատար էֆ. Ս. Նտ-
թանեան.
ԷՐԶՐՈՒՄ — Տեարք Ինճիճեան Եղբարք.
ԹՕԳԱՏ — Յովհաննէս էֆ. Գաղանճեան.
ԻԶՄԻՐ — Կարապետ էֆ. Մուկճանեան.
ՄԱԼԿԱՐԱ — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.
ԽԱՐԲԵՐԴ. — Խաչիկ էֆ. Քէօսէեան.

ԿԵԾԱՐԻԱՅ — Դեր. Տրդատ Ծ. Վ. Պալեան
ՄԱՐԱՇ — Արթ. Տ. Յովհաննէս քհնյ.
Վարժապետեան.
ՄԱՐԶՈՒԱՆ — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ՄՈՒՇ — Դեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ — Յակոբ էֆ. Սուքիասեան.
ՈՒՐՅԱ — Գէորգ էֆ. Ոսկերիչեան.
ՊԱՆՏԵՐՄԱ — Արմենակ էֆ. Ս. Մարեան.
ՊԱՐՏԻՋԱԿ — Վահան էֆ. Ճիկունի
ՊՐՈՒԾԱ — Օննիկ էֆ. Լութֆեան.
ՌՈՏՈՍԹՕ — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ՍԱՄՍՕՆ — Կարապետ էֆ. Սէֆէրեան.
ՍԸՎԱԶ — Յ. էֆ. Գարակէօզեան.
ՏԱՐԴԱՆԷԼ — Հայկ էֆ. Թայքէսէեան.
ՏՐԱՊԶՈՆ — Սահակ էֆ. Էթմէքճեան:

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Դերք գնել կ'ու զէօք, գիմեցէք Զարդարեան Գրատունը. հան միշտ պիտի
գտնէք ամեն ու զածնիդ և միշտ զեղչով.